ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԶԱՆԳԵԶՈՒՐԻ 1918—1919 թթ. ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԿՈՒՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ստորև հրապարակվող փաստաթղթերը նվիրված են թուրքական և նրանց հետ սերտորեն համագործակցող մուսավաթական գավթիչների դեմ Զանգեզուրի բնակչության 1918—1919 թթ. ծտվալած ինքնապաշտպանական կռիվներին, որոնցից զանգեզուրցիները պատվով դուրս եկան։

Հրապարակվող փաստաթղթերը (հայերեն և ռուսերեն) վերցված են ՀԽՍՀ պատմության պետական կենտրոնական արխիվի և ԽՄԿԿ կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի կուսակցական արխիվի համապատասխան ֆոնդերից։ Երկու հաղորդագրություն վերցված է ժամանակի մամուլից։ Փաստաթղթերը հրապարակվում են աննշան կրճատումներով։ Տեքստային միջամտությունները վերցվել են միջակ փակագծերի մեջ։ Փաստաթղթերը հրապարակվում են որոշ կրճատումներով։

Ռ. Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

№ 1

Զանգեզուրի կենտրոնական ազգային խորհրդի կոչը գավառի հայ բնակչությանը՝ Բաթումի ստրկացուցիչ պայմանագիրը[1] մերժելու և թուրք-մուսավաթական սպառնալիքի դեմ ինքնապաշտպանության գործը կազմակերպելու մասին

18 օգոստոսի (հին տոմարով)
1918 թ., Գորիս

Երևանի նահանգի հայությունը ստիպված է եղել խայտառակ հաշտություն կնքելու մեր դարավոր ու արյունարբու թշնամի տաճկի հետ։

Կովկասում ըստ հաշտության պայմանների կազմվել են երեք հանրապետություններ՝ Վրաստան, Ադրբեջան և «Հայաստան». վերջինս այլ կերպ կոչվում է Արարատյան Հանրապետություն, որի մեջ չեն մտնում պատմական Սյունիքի և Արցախի հայերը։

Ինչպես Բուլղարիան երկար ժամանակ մնաց առանց իր Մակեդոնիայի, իսկ Ֆրանսիան՝ առանց Էլզաս-Լոթարինգիայի, այնպես էլ Հայկական հանրապետությունից արհեստական կերպով անդամահատել են Արցախն ու Սյունիքը, որոնք Մակեդոնիայի և Էլզաս-Լոթարինգիայի պես շարունակ պիտի ըմբոստանան և հանգիստ կյանք չպետք է ունենան, մինչև որ չվերանան արհեստական բաժանումները...

Դառն է խոստովանել, որ Գանձակի պես միլիոնաչափ հայությունը[2] հաշտության պայմանների համաձայն պետք է հպատակվի իբրև թե Ադրբեջանին, թաթարներին...

Եկվոր թաթարը մեր պատմական Սյունյաց երկրում ուզում է հպատակեցնել և գուցե ստրուկ դարձնել Ղարաբաղի և Զանգեզուրի լեռներին ապաստանած հայերին[3], որոնք գլուխ չեն խոնարհել Լենկ-Թեմուրներին և Ալփ-Ասլաններին և ոչ էլ օսմանյան զորքերին։

Եթե մեր հարևան թաթարները չդիմեին տաճիկների օգնության և նրանց միջոցով շուզենային կազմակերպել իրենց Ադրբեջանը, թերևս մենք հնարավորություն ունենայինք փնտրելու մի ընդհանուր ուղի և ստեղծեինք որոշ տանելի պայմաններ երկու ազգությունների համար։

Մեր հարևան թաթարների բռնած դիրքը դեպի տաճիկները, երկար ու ձիգ ամիսների ընթացքում ճանապարհները փակելը և հարյուրավոր հայ անցորդներին կոտորելը, հայերին բոլոր շուկաներում բացարձակ բոյկոտ հայտարարելը, զանազան մութ նպատակներով շտապողական մոբիլիզացիա կա-

տարելը, այս բոլորը մեզ համոզում են. որ դժբախտաբար այլևս մենք մի ընդհանուր քաղաքական լեզվով խոսել մեր հարևանների հետ չենք կարող։

Տեղական թրքությունը կամա թե ակամա ապավինել է տաճիկ բեյերին ու փաշաներին, դրանց օգնությամբ ու հարկադրությամբ կազմակերպում է և կռիվ մղում Բաքվի և Թավրիզի ճակատներում՝ անգլո-ռուսական ուժերի, իսկ երկրի ներսում՝ հայերիս դեմ, մեզ նախ և առաջ տնտեսապես խեղդելով, ապա և ոչնչացնելով ֆիզիկապես...

...Մեր առջև երկու ճանապարհ կա. կամ պետք է առանց կռվի զինաթափ լինենք, հանձնվենք տաճկին ու թաթարին, տանք նրանց բռնաբարելու մեր քույրերին մեր աչքերի առջև, ապա ոչխարի պես մորթոտվենք բոլորս կամ՝ ամենքս միանգամից պետք է պատրաստ լինենք զենքը ձեռքներիս պաշտպանելու մեր գոյությունն ու պատիվը։

Գանձակի նահանգի հայության ամենամեծ հատվածը՝ Գյուլիստանը, Ջրաբերդը, Խաչենը, Վարանդան և Դիզակը, դեն են շպրտել այդ միջին ճանապարհը և մերժել են բացարձակապես հպատակվելու թաթարին։

Բոլոր գյուղերի և Շուշի քաղաքի ընտրված ներկայացուցիչները հավաքվել են և կազմել Ղարաբաղի ժողովրդական կառավարություն, որը հրավեր է կարդացել Զանգեզուրին՝ ուղարկելու իր ներկայացուցիչներին։

Թաթար ցեղը, որ ուզում է ունենալ անկախ Ադրբեջան՝, վճռել է նվաճել և Ղարաբաղի հայերին։

Սակայն թո՛ղ չկարծվի, թե շատ լավ դրության մեջ են մեր հարևան թուրքերը։

Տաճիկ փաշաները և ասկյարները տնտեսապես քամել են թուրք ժողովրդին, ինչպես և ֆիզիկապես ուժասպառ են արել նրան, շարունակ երիտասարդներին ուղարկելով Բաքվի և Թավրիզի ճակատները, որտեղ համենայն դեպս սարսափելի զոհեր են տվել տաճկա-թաթարական բանակները։

Մի մոռանաք և այն հանգամանքը, որ անասնապահ ու դաշտի ժողովուրդ-թաթարը այս տարի չկարողացավ ազատորեն սարը բարձրանալ և ջերմ ու տենդի և երաշտի ղուլումին մատնվեց թե՛ ինքը և թե՛ նրա հոտն ու նախիրը... Խոլերան էլ իր հունձն է անում։

Այս բոլորից հետո Զանգեզուրի հայ ժողովուրդը չի կարող ուրիշ ճանապարհ բռնել. նա պիտի գնա իր մեծ եղբոր՝ Ղարաբաղի հայության ուղիով, որովհետև եթե նույնիսկ ուզենա ուրիշ գործելակերպ էլ բանեցնել, ոչ ոք չի հավատա նրա անկեղծությանը և նա չարաչար կպատժվի։

Զանգեզուրի հայությունն էլ պետք է անխուսափելի կերպով բռնե կռվի ճանապարհը, որը կարող է նրան փրկել կամ ավելի քիչ պատուհասի ենթարկել, քան թե զինաթափ լինելը և ստրուկ դառնալը։

Ուրեմն գործի անցնե՛նք, կազմակերպե՛նք մեր սեփական զորքն ու զինված խմբերը, ունենա՛նք խիստ կարգապահություն և հավատա՛նք, որ դա՛ է մեր փրկության միակ ճանապարհը։

«Մեղքը մերը չէ, անե՛ծք դուշմանին, նա պարզեց դրոշ արյունոտ մարտին...»։

Սյունիքի ընդհանուր լիազոր Հովակ Ստեփանյան

ՀԽՍՀ ՊՊԿԱ, ֆ. 370, ց. 1, գ. 33, թ. 5։ Տպագիր ու վավերացված թերթիկ։

№ 2

Զանգեզուրի կենտրոնական ազգային խորհրդի կոչը՝ ուղղված երկրամասի բնակչությանը

4 սեպտեմբերի 1918 թ.
Գորիս

Ծանր օրեր է ապրում Զանգեզուրը։ Դրությունը ժամ առ ժամ օրհասական է դառնում հայ ժողովրդի համար։

Մեզ հարկավոր է ուժեղ և վճռական իշխանություն ու երկաթյա կարգապահություն։

Այդ առիթով Կենտրոնական ազգային խորհուրդը հայտնում է ի գիտություն Զանգեզուրի ժողովրդի, որ այսօրվանից գավառումս մտցվում է պաշարողական (осадное) դրություն և գավառիս զինվորական դիկտատոր է ընտրված Շուշվա գնդի հրամանատար գնդապետ [Միքայել բեկ] Մելիք-Շահնազարյանը։

Զանգեզուրի կենտրոնական ազգային խորհուրդ

ՀԽՍՀ ՊՊԿԱ, ֆ. 370, ց. 1, գ. 33, թ. 17։ Տպագիր թերթիկ։

№ 3

Ղափանի ազգային խորհրդի նախագահ Ս. Մելիք-Ստեփանյանի[5] նամակը իր խորհրդի լիազոր ներկայացուցչին Գորիսում՝ Ղարաղշլաղի դեպքի վերաբերյալ ստույգ տեղեկություն ստանալու և խաղաղ բնակչության նկատմամբ գործադրվող բռնությունների մասին

30 սեպտեմբերի 1918 թ.,
Ղաթարի հանքեր

...Զարմանալի է, քանի՞-քանի՞ գրություններ եք ուղղած մեզ Ղարաղշլաղի դեպքի՝ վերաբերյալ, բայց մի հատիկ ստույգ տեղեկություն չի ստացվել մեզ մոտ. ի՞նչ եղավ, ինչպիսի՞ վախճան է ունեցել Ղարաղշլաղի դեպքը—գուցե՝ մենք Ձեր շրջանից Ձե՛զ նորություն ասենք։ Այստեղ լուրջ աղբյուրներից լսում ենք, որ Ղարաղշլաղի զինվորները առյուծի պես, դեռևս ոչ մի տեղից օգնություն չստանալով, դիմանում են գյուղի և գյուղից որոշ հեռավորության վրա, «սաղսազանում» (կենդանանում—Ռ. Գ.), իրենց կրծքին ընդունելով թուրք խուժանի շարունակաբար գրոհները։

Գալով մոբիլիզացիայի հարցին, չենք իմանում՝ ինչպես է հասկացվում այդ [հարցը] Գորիսում։ Դե՛, մոբիլիզացիան մի անգամ կլինի, քանիերորդ անգամն է հայտարարվում, բա ժողովուրդն էլ ինչպես չլքի։

Վերջին նամակում գրում եք, որ Երևանից զինվորական սպա է եկած որոշ կարգադրությամբ։ Ձէ՞ի՞ք կարող երկու տող գրել նրա «միսիայի» վերաբերյալ, որ գոնե արժեք ստանար Ձեր գրությունը։

Իմացե՛ք, որ Տաթևի կողմից նորից եկել են «անձնուրաց, ազգասեր երիտասարդներ» և հենց այնպե՛ս քշել տարել են մեր շրջանի «Թափուր» կոչվող տեղից 300-ից ավելի ոչխարներ, եղներ ու կովեր, սպանել մի կին, մի 16 տարեկան տղայի էլ հետները տարել։ Բաս բավական չէ, է՞, մախլա՞ս, ափսո՞ս, որ ուշ կլինի արդեն, когда наступит отрезвление։

Խորհրդի պատվիրած բլանկները անպայման բերե՛ք Ձեզ հետ։

Նախագահ խորհրդի Ս. Մելիք-Ստեփանյան
Քարտուղար Ի. Մելիք-Քարամյան

ԽՄԿԿ Կենտկոմին առընթեր Մլի հայկական մասնաճյուղի կուսարխիվ, ֆ. 1022, ց. 2, գ. 7, թ. 1—3։ Բնագիր։ Ձեռագիր։

№ 4

Ղափանի ազգային խորհրդի գրությունը գեներալ Անդրանիկին՝ Գողթանի հայության նկատմամբ թուրքական հրամանատարության գործադրած բռնությունների և այդ բնակչությանը օգնություն կազմակերպելու հարցերի մասին

27 հոկտեմբերի 1918 թ.,
Ղաթարի հանքեր

№ 706

Հայկական հարվածող զորամասի հրամանատար
գեներալ-մայոր Անդրանիկին[7]

Վերջին օրերս Գողթանի տաճկական կառավարության ներկայացուցիչ, ինքն իրեն Օրդուբադի կոմենդանտ անվանող Խալիլ բեյը՝ զանազան ռեպրեսիաներով պահանջում է չգաղթող գյուղերից 75 հազար ռուբլի։ Այս պահանջված գումարի մեծ մասը, մոտ 60 հազար ռուբլի, արդեն վճարված է այնտեղի այսպես անվանյալ նախկին լիազոր Աշոտ Մելիք-Մուսյանցի[8] ձեռքով։ Այս քանակով չբավականանալով, Խալիլը նոր զինաթափության պահանջ է դրել։

Ղափանի Ազգային խորհուրդը, ղեռ[ևս] Ձեր [կողմից] այն շրջանը թողնելուց, շարունակ թե՛ գրավոր և թե բանավոր հարաբերությունների մեջ էր և է շարունակ։ Առհասարակ այն միտքն էինք վառ պահում նրանց մեջ, որ չվախենան, որ թուրքերը առանձին մեծ ուժ չեն ներկայացնում, որ նրանց ուժը կազմված է միմիայն խուժանից ու թալանչիներից։ Պետք է ընդառաջ չգնալ նրանց որևէ պահանջին։ Բայց ցավ ի սիրտ պետք է ասել, որ թուլամորթ զոկերը նրանց ծարավը հագեցնում էին ոչ միայն փողով, այլ մետաքսով, մատանիներով և գոհարներով։ Թեև ուշ, բայց վերջապես սթափվեցին գողթանեցիք և ըմբոստանալով հայտնեցին Խալիլ բեյին, որ զինաթափ չեն լինում և ի պահանջել հարկին պատրաստ են զենքով մեռնել։

Ղափանը իսկույն օգնություն հասցրեց Փառակա և Ռումիս [գյուղերին] նախ 75 զինվոր և այսօր-վաղը դարձյալ կուղարկենք մի հարյուրյակ։ Թուրք խուժանը ցղնայում ու [նրա] շրջակայքումն է։ Մենք այդ մասին հայտնել ենք Գնդեվազ և պատասխան ստացել, որ պատրաստ են իրենց դապաս ուժը երկու մասի բաժանել... Այսպիսով մտադիր ենք Խալիլ բեյին յուր մարդկանցով հուպ տալ, ինչպես հարկն է։

Սրանով հայտնում ենք Ձեզ ի գիտություն։

Նախագահ խորհրդի Ս. Մելիք-Ստեփանյան
Զինվորական հրաման[ատար] (ստորագրություն)

Քարտուղար Ի. Մելիք-Քարամյան

Հ. Գ. Ձեր գրությունը Գողթանից պուլեմյոտներ և թնդանոթներ բերելու վերաբերմամբ, ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ այնտեղ սպասվում են լուրջ գործողություններ, առայժմ հետաձգվում է։

Քարտուղար Ի. Մելիք-Քարամյան

ՀԽՍՀ ՊՊԿԱ, ֆ. 370, ց. 1, գ. 34, թ. 6—8 ճակ.: Ձեռագիր։ Բնագիր։

№ 5

Обращение генерала Андраника к армянскому и мусульманскому населению Зангезурского уезда о прекращении враждебных действий друг против друга

23 ноября 1918 г.,
г. Герюсы

Как известно теперь населению уезда, мое движение в Шушу было приостановлено приказом командующего союзными войсками в Баку[10] генерала Томсона. Приказ этот был основан на ходатайстве председателя Азербайджанского правительства г. Хана-Хойского... Поэтому я приостановил свое движение в Шушу и прекратил всякие боевые действия. На основании этого приказа требую прекратить всякие враждебные действия друг против друга, предупреждая, что всякие само-

чинные выступления, от кого бы они ни исходили, будут в корне подавлены и виновные наказаны по законам военного времени.

Генерал-майор *Андраник*

ЦГИА АрмССР, ф. 370, оп. 1, д. 50, л. 13. Печатный экземпляр.

№ 6

Գեներալ-մայոր Անդրանիկի բողոքը դաշնակիցների զորքերի հրամանատարին՝ Բաքվում հայ-ադրբեջանական թշնամական հարաբերություններին վերջ տալու և տեսական խաղաղություն հաստատելու հարցերում անգլիացիների խոստմնազանց լինելու մասին

[Փետրվար, 1919 թ.]

Անցյալ տարվա [1918 թ. նոյեմբերի] 18-ին Շուշու ուղղությամբ կատարվող իմ զորաշարժը դադարեցվեց գեներալ Թոմսոնի կարգադրությամբ։

Ինձ հավաստիացնում էին, որ միջոցներ են ձեռնարկված կանխելու ամեն մի ագրեսիվ գործողություն կամ զինաշարժ, թե անցյալի գիրկն են անցել մուսուլմանների կողմից ճնշում գործ դնելու ամեն մի մտածողություն անգամ։ Ես հավատ ընծայեցի այդ բոլորին, վերադարձա Զանգեզուր, ազնիվ խոսք տալով գործադրել ջանքերս, որպեսզի վերականգնվի խաղաղությունն ու հանգստավետ կյանքը, դիմել բոլոր միջոցներին, որպեսզի հրամանատարության ներքո գտնվող տերիտորիայի ողջ ազգաբնակչության նկատմամբ, առանց ազգային խտրության, ցուցաբերվի ամենաբարյացակամ վերաբերմունք։

Ցավոք, ներկայումս ինձ հայտնի է դարձել, որ Ղարաբաղում և Զանգեզուրում մուսուլմանական զորամասերը տեղաշարժեր են կատարում, ուժեր կենտրոնացնում և մարտական զինամթերք տեղափոխում տեղից տեղ։

Այս բոլորի մեջ ես տեսնում եմ մի բեկում, որ առաջացել է նախկինում տրված կարգադրությունների մեջ՝ ի վնաս հայության բարօրությանը, ինչպես նաև մուսուլմանների մարտահրավերը, ուղղված Զանգեզուրի ու Ղարաբաղի հայությանն ու իմ դեմ։ Ուստի թախանձաբար խնդրում եմ հանուն ազգաբնակչության բարեկեցիկ կյանքի, միջոցներ ձեռք առնել վերականգնելու այն իրավիճակը, որ գոյություն է ունեցել մինչև նոյեմբերի կեսերը, կարգադրել տեղահանել զորամասերը Խանքենդի բնակավայրից և այլ կետերից, որպեսզի մտքերը խաղաղվեն և հայերի կողմից հակագործողությունների առիթ չներկայանա։

Զանգեզուրի Հայկական ուժերի գլխավոր հրամանատար,
գեներալ-մայոր Անդրանիկ

ՀԽՍՀ ՊԿԱ, ֆ. 370, ց. 1, գ. 39, թ. 7։ Հաստատված պատճեն։ Թարգմանություն ռուսերենից։

№ 7

Թղթակցություն «Արև»[11] թերթում. «Ղարաղշլաղի ավերումը»

20 փետրվարի 1919 թ.,
Բաքու

Տաճկական փաշաները Կովկաս մտնելով ոչ միայն Բաքվի բանվորական իշխանության դեմ էին, այլև ցանկանում էին Ղարաբաղում և Զանգեզուրում ոչնչացնել հայ աշխատավորությանը։ Շուշին անձնատուր եղավ առանց դիմադրության, որտեղից տաճկական զորքերն ուղղվեցին դեպի Զանգեզուրի սահմանում գտնվող Ղարաղշլաղ գյուղը... Տաճկական զորքը Թթու ջրից սկսած՝ շրջան է կազմում և ցանկանում զինաթափ անել Ղարաղշլաղը։ Հա-

յերը դիմադրություն են ցույց տալիս։ [1918 թ.] սեպտեմբերի 4-ին տաճիկները ավելի են մոտենում և օղակում գյուղը։ Հայերը ծածուկ մարդ են ուղարկում հայ գյուղերը և օգնություն խնդրում։ Ինքնապաշտպանության գործը կազմակերպում են Մանուչարը, Սարգիսյանը և Ջհանգիրը, որոնք գյուղի երեք թաղամասերը 13 օր մեծ քաջությամբ պաշտպանում են տաճիկների հարձակումից։ Ոչ մի տեղից օգնություն չստանալով, մեր քաջերը պատռում են պաշարողական շղթան և ետ քաշվում դեպի Մեծ Շենը, իրենց հետ տանելով կանանց ու երեխաներին։ Սրանց հաջողվում է մի կերպ հայ գյուղերը հասնել-ազատվել։ Մնացածները թաքնվում են զանազան տեղերում, մարագներում, խոտի դեզերում և այլն, որոնց, սակայն, տաճիկները գտնում են և կոտորում։

Ղարաղշլաղ մեծ գյուղը, որ մի քանի հասարակական հիմնարկություններ ուներ, ինչպես մանր վարկի ընկերություն, սպառողական խանութ, ըրկրոց, գրադարան և այլն, ամբողջապես ավերվեց և թալանվեց։ Փողոցներում դեռ թափված են դիակներ։ Փախած ժողովուրդը շատ ծանր օրեր է քաշում և տանջվում սովից ու հիվանդություններից։

Զ. ՄԿՐՏՉՅԱՆ

Արև, 20. II. 1919։

№ 8

Հաղորդագրություն «Արև» թերթում՝ Զանգեզուրի քաղաքական-տնտեսական իրավիճակի վերաբերյալ

18 մարտի 1919 թ.

Գորիսի Ազգային խորհրդի որոշումը

Գորիսի Ազգային խորհրդի որոշման համաձայն արգելվում է այդ շրջանից ամեն տեսակի կենսամթերքի արտահանումը։

Շրջանային դատարանը

Զանգեզուրի հայկական դատարանին կից Գորիսում հիմնված է դատաստանական մի նոր հիմնարկություն, որը պիտի կատարի շրջանային դատարանի դերը։

Գորիսն ու Ադրբեջանը

Ադրբեջանն ամեն տեսակի միջոցների ձեռնարկեց իր «իշխանությունը» տարածելու և Զանգեզուրի վրա, բայց անհաջող, հետո էլ սկսել է զանազան «պաշտոնական գրություններ» ուղղել։ Ազգային խորհուրդը վերջին անգամ պատասխանեց, որ հանգիստ թողնեն թե՛ իրեն և թե՛ իր խաղաղ ժողովրդին ադրբեջանական ամեն տեսակի ոտնձգություններից։ Ստացված բոլոր գրությունները ետ են ուղարկված։

Մթերքների թանկացումը

Շահագործումի պատճառով Գորիսում և իր շրջանում կենսամթերքներն օրավուր թանկանում են։ Հասարակությունը պետք է միջոցներ ձեռք առնի և աշխատի համայնական առևտրով կենսամթերքներ ստանալ։

Արև, 18. III. 1919։

№ 9

Զանգեզուրի բնակչության դիմումը գեներալ-մայոր Անդրանիկին՝ որտեղ ափսոսանք է հայտնվում երկրամասից նրա հեռանալու կապակցությամբ

1 ապրիլ 1919 թ.,

Գորիս

Գեներալ-մայոր Անդրանիկին։

Անսալով մեր ժողովրդի բուռն խնդրանքին, անցյալ փոթորկոտ տարում մնացիք մեր երկրում, մեկտեղ կրելով մեր երկրի ինքնապաշտպանության գործի ծանրությունը։

Ձեր լեգենդական անվան վայել հերոսությամբ տարաք Դուք այդ ամենն, ավելացնելով փառքի այն դափնիները, որոնք երեսուն տարվա ընթացքում մշտական բոլորել են Ձեր՝ ազնիվ հերոսի, խրոխտ ճակատը։

Զանգեզուրի հայ ժողովուրդը, որ երբեք չպիտի մոռանա Ձեր կատարած մեծ գործը, այսօր ցավում է Սիսիանի և Բուն Զանգեզուրի համագումարի միջոցով, որ հանգամանքների դասավորությամբ թողնում ու հեռանում եք։

Սակայն մի բան, որ նրան կարող է մխիթարել, դա այն է, որ Դուք գընում եք մի ավելի մեծ գործ կատարելու՝ քայքայված, բնավեր հայ ժողովրդի վերաշինող հայրենիքի նոր հիմքերը դնելու։

Նպաստավոր հանգամանքներ չլինելու պատճառով, եթե հնարավորություն չունենաք գաղթականությունը Ձեզ հետ շարժելու, համագումարը վստահեցնում է, որ նրանք քանի մեզ մոտ են, պիտի ստանան այն հյուրընկալությունն ու եղբայրական օգնությունը, որ ցարդ ստացել են։ Սիսիանի ու Զանգեզուրի համագումարը յուր խորին շնորհակալությունը հայտնելով, Ձեզ բարի երթ է մաղթում և Ձեր նոր գործին հաջողություն ցանկանում իր հատուկ պատգամավորությամբ։

Համագումարի նախագահ Մ. Զաքարյան

Քարտուղարներ Հ. Տեր-Ստեփանյան

Նիկ. Դորունց

ՀԽՍՀՊԿԱ, ֆ. 370, ց. 1, գ. 34, թ. 41 և հակ., Ձեռագիր։ Բնագիր։

№ 10

Վրաստանում Հայաստանի հանրապետության դիվանագիտական ներկայացուցչին ուղղված Ա. Սուլթանովի ՀՀ դիվանագիտական ներկայացուցչի գրությունից՝ Ղարաբաղն ու Զանգեզուրը նվաճելու մուսավաթականների մտադրությունների մասին

№ 381

23 հունիսի 1919 թ.,
[Բաքու]

...Սուլթանովը[12] ոչ մի միջոցի առջև կանգ չի առնում Ղարաբաղը նվաճելու և նրակարծիքով այդ հարցը սպառված պիտի համարել, որովհետև Դիզակը, Շուշի և Ջիվանշիրը թե՛ արևելքից և թե՛ հարավ-արևելքից՝ Զանգեզուր գաղթից, Ղաբուխի տակով, շրջապատված են թուրքական ուժերով, այնպես որ նդհարման դեպքում դրսից օգնություն ստանալու ոչ մի հնարավորություն չա։ Այժմ Սուլթանովը իր ուժերը կենտրոնացնում Զանգեզուրում, որովհետև Ղարաբաղի գրավման հարցը նա վերջացած է համարում։ Պատգամավորների կարծիքով Զանգեզուրի դեմ ռազմական գործողությունները սկելու դիտավորությունը Սուլթանովը չի թաքցնում և միակ միջոցն է համարում Ղարաբաղի հարցի հանգույցը լուծելու։ Թեև Ղարաբաղի ազգային խորհրդի երկու անդամ անցել են գավառ՝ իրենց վրա վերցնելով կազմակերպչաան գործը, բայց պառլամենտականների կարծիքով առանց նյութական միջոցների և հարկավոր չափով ռազմանյութերի, նոքա հազիվ թե կարողանա իրենց վրա վերցրած պարտականությունները կատարել։ Ցարդ հայկակն կառավարությունից նոքա իրենց հատկացրած նպաստը չեն կարողացեստանալ Զանգեզուրից, որովհետև ամեն ինչ Զանգեզուրը իր շրջա-

նումն է պահել։ Այժմ հաղորդակցություն չկա Զանգեզուրի հետ, բոլոր ճանապարհները փակված են և գտնվում են Սուլթանովի եղբոր տրամադրության տակ։ Ընդհանուր տպավորությունն այն է, որ Ղարաբաղը օրհասական օրեր է ապրում...

Պառլամենտականների ասելով, Ղարաբաղի դեպքերի ամբողջ հանցանքն ընկնում է [Ղարաբաղի] նահանգապետի [Սուլթանովի] վրա, որը հստատվում է վկաների ցուցմունքով։ Անգլիական միսիայի բռնած դիրքը դեպքերի ժամանակ դատապարտելի է և պարսավանքի արժանի։

ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ
Ադրբեջանում (ստորագրություն)

ՀԽՍՀ ՊՊԿԱ, ֆ. 276, ց. 1, գ. 42, թ. 111—112։ Ձեռագիր։ Բնագիր։

№ 11

Կոչ երկրամասի ազգաբնակչությանը՝ թուրք-մուսավաթական նվաճողների հարձակումների պատճառով Զանգեզուրում ռազմական դրություն հայտարարելու մասին

4 հուլիսի 1919 թ.,
Գորիս

Զանգեզուր—Ղարաբաղի Շրջանային խորհրդի [1919 թ.] ամսու 1-ի 51-րդ նիստում որոշվեցավ հետևյալը.

Զանգեզուրի թրքության կողմից վարվող ագրեսիվ քաղաքականության և հարձակումների առթիվ Շրջանային խորհուրդը հայտարարում է սկրում ընդհանուր զինվորական դրություն:

Զանգեզուրի բոլոր զինվորական ուժերի գերագույն հրամանատար է նշանակվում սպա Արսենը։

ԽՄԿԿ Կենտկոմին առընթեր Մեծի հայկական մասնաճյուղի կուսակցական արխիվ, ֆ. 1022, ց. 3, գ. 95, թ. 1։ Տպագիր թերթիկ։

№ 12

Զանգեզուրի զինված ուժերի հրամանատար Արսեն Շանմազյանի հրամանից

№ 1

3 հուլիսի 1919 թ.,
Գորիս

Այսօրվանից ես ստանձնում եմ Զանգեզուրի ամբողջ զինված ուժերի հրամանատարությունը։

Ահեղ վտանգի պահին, երբ Ադրբեջանի զորքերը և խանանդեկական հրոսակախմբերը ձգտում են ավերել ու ոչնչացնել մեր երկրամաս, ես Զանգեզուրի բոլոր զինված ուժերին կոչ եմ անում ազնվությամբ և սրտաբար կատարել իրենց պարտքը հայրենիքի հանդեպ։ Հունիսի 28-ին, Ֆվարդի տակ, թշնամին արդեն փորձել է քաջակորով Դափանի որդիների ենքի ուժը։

ԽՄԿԿ Կենտկոմին առընթեր Մեծի հայկական մասնաճյուղի կուսակցական արխիվ, ֆ. 1022, ց. 3, գ. 97, թ. 1։ Տպագիր թերթիկ։ Թարգմանություն ռուսերենից։

№ 13

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի մինիստրության հաղորդագրությունը Թիֆլիսի իր դիվանագիտական ներկայացուցչությանը՝ Զանգեզուրի գյուղերի վրա մուսավաթական զորքերի հարձակման և հայ բնակչությունից ստացած հակահարվածի մասին

9 հուլիսի 1919 թ.,
Երևան

Ադրբեջանի կազմակերպված կանոնավոր զորքերը և խուժանը ամսույս [հունիսի] 28-ին, առանց մեզ զգուշացնելու, առավոտյան ժ. 3-ին հարձակվեցին Ղափանի Ղարարաբա, Ագարակ, Ծղվարդ գյուղերի վրա։ Ասկյարի շորով զևրի բռնված զինվորի ցուցմունքով այդ զորամասը եկել է Կարյագինից՝ 1500 կանոնավոր զինվորներ, 2000 խուժան։ Զորամասի հրամանատարն է Քյազիմ փաշան, ունեին 7 գնդացիր և 10 ֆուրգոն փամփուշտ։ Ղարաբաբան թուրքերի կողմից թալանված և ավերված է, այրված են նույնպես հնձած հացը և խոտը։ Ագարակը ազատվել է հրաշքով։ Թշնամին դիրքերը բռնել էր գիշերանց՝ ամեն կողմից, լուսաբացին գրոհ տալով գյուղը, կրակել էր գյուղի մոտի գոմերը և մարագները։ Ագարակի կտրիճները շտաբս-կապիտան Սմբատ Թորոսյանի ղեկավարությամբ հերոսաբար դիմադրում են իրենցից մի քանի անգամ շատ թշնամուն և մեծ կորուստներ պատճառելով՝ փախուստի մատնում։ Թշնամուց խլել են մի «լուիս» գնդացիր և մեկի մասերը, մեծ քանակությամբ փամփուշտներ։ Խլված գնդացիրը մերոնք շուտ են տալիս և սկսում կրակել թշնամուն, որը նրանց վերջնական փախուստի է մատնում Ագարակի շրջանից։ Թշնամու գնդացիրներից երկուսը գործում էր Ծղվարդի դեմ, իսկ հինգը՝ Ագարակի։

Ծղվարդում թուրքերին հաջողվում է մտնել գյուղը։ Կռիվը տեղի է ունեցել նույնիսկ գյուղի փողոցներում։ Ծղվարդին օգնության են հասել երիցավանեցիք և սևաքարցիք, որոնք միացյալ ուժերով թշնամուն հետ են մղում։

Ամսի [հունիսի] 29-ին մերոնք են հետապնդում թշնամուն՝ վերջնականապես սարսափ ազդելու համար...

[Հունիսի] 28 և 29-ի կռիվներում մեր կողմից սպանվում է 18 հոգի և 10 հոգի վիրավորվում։ Թուրքերի կողմից՝ 100 հոգի։ Դիակները չեն կարողանում տանել։ Դիակների մոտից հավաքված են 100-ից ավելի հրացաններ։ Թուրքերը պանիկայի ենթարկված փախչում են, բղավելով՝ հայե՛ր, սպասեցե՛ք, մի քանի օրից հետո կգանք ավելի մեծ զորքերով և թնդանոթներով։ Գերի ընկած զինվորների պատմելով, Քյազիմ փաշան կարգադրել էր ինչ գնով էլ լինի՝ գրավել Ագարակը, Ծղվարդը, և Ղարաբաբան, որպեսզի հեշտությամբ անցնենք դեպի Մաղան (Ղափան—Ռ. Գ.)։

Թուրքական զորքերը այժմ կենտրոնացված են Դոնդարլու գյուղում։ Լսվում են թնդանոթային վարժության ձայներ։

Հուլիսի 1-ի առավոտյան թուրքերը հարձակվել են Քյոսա-Մեջիդի դիրքերի վրա։ Հինգ ժամվա հրացանաձգությունից հետո հարձակումը հետ է մղված։ Հուլիսի 2-ի առավոտյան հրացանաձգություն է եղել Խոզնավարի ուղղությամբ և Երիցաթումբի։ Խոզնավարում մեզանից սպանվել է 1-ը, վիրավորվել՝ 2-ը։ Թուրքերի վնասվածքները հայտնի չեն։

Մեր ձեռքն են անցել Ղափանի կռիվներում երեք գնդացիր, 120 հրացան, 15 ձիաներ, փամփուշտ, պարեն։

Դիվանապետ *(ստորագրություն)*

Գործավար *(ստորագրություն)*

ՀԽՍՀ ՊՊԿԱ, ֆ. 276, ց. 1, գ. 42, թ. 219։ Մեքենագիր, բնագիր։

№ 14

Секретное отношение начальника генерального штаба войск Азербайджанской республики Карабахскому генерал-губернатору об организации курдских конниц и пехоты для сохранения «порядка» в генерал-губернаторстве

7 сентября 1919 г. Баку

№ 4007

В собственные руки Карабахскому генерал-губернатору

Мирное разрешение Карабахского вопроса заставляет думать, что присоединение Зангезурского уезда произойдет без вооруженной борьбы, так как его армянское население после Нахичеванского разгрома поставлено между двух огней и едва ли рискнет дать нам отпор, не имея прежней поддержки в тылу.

Тем не менее сохранение спокойствия в Карабахе было и будет составлять нашу постоянную заботу при столкновении с доброармиею и ее естественною и постоянною союзницею Арменией.

При настоящем положении дел Армения нам не опасна, но такая благоприятная обстановка не может длиться постоянно и мы должны готовиться к худшему.

Помириться с окончательной потерей Карабаха армяне не могут и несомненно будут стараться использовать всякую возможность, дабы вернуть потерянное.

Все это потребует от нас с объявлением мобилизации оставления гарнизонов в Ханкенде, а в будущем и в Герюсы для наблюдения за армянами.

Таким образом Карабах может оттянуть с фронта весьма заметные силы от нашей небольшой регулярной армии. Однако есть возможность не только не ослаблять полевые войска для охраны Карабаха, но из глубины его выдвинуть на фронт живую силу, оставляя достаточные гарнизоны для поддерживания порядка в районе Карабахского генерал-губернатора.

Для сей цели и нужно лишь использовать боевой материал в виде курдов, организовав из них конницу и пехоту по образцу полков «Гамидие», практичность организации которых проверена турками опытом последней войны. О доблестном поведении курдских полков в боях на Малоазиатском, Персидском и Месопотамском театрах военных действий говорят единогласно все участники войны.

Для создания кадров курдских частей в мирное время предположено сформировать Курдский конный полк и Стрелковый батальон, развертываемый в военное время в 4 батальона. Курды призывного возраста отбывают воинскую повинность в своих частях, а с объявлением мобилизации производятся и новые формирования (полки и батальоны 2 и 3 очередн.), часть которых выделяется на фронт, а остальные остаются в гарнизонах Карабаха.

Для подробной разработки организации курдских частей по упомянутых основаниям необходимо выяснить пока количество пеших и конных бойцов, которых могут выставить курды в возрасте от 20—40 лет.

Сообщая об этом, прошу Ваше Превосходительство высказать Ваше мнение по этому вопросу и сообщить просимые цифры.

Генерал-лейтенант *Сулькевич*

ЦГИА АрмССР, ф. 276, оп. 1, д. 131, лл. 41 и об. Машинопись. Незаверенная копия.

№ 15

Нота министра иностранных дел Республики Армении дипломатическому представителю Азербайджанской республики при правительстве Республики Армении о наступлении мусаватистских войск на Зангезур

28 сентября 1919 г.,
№ 93 г. Эривань

За последнее время на имя правительства Армении поступает ряд сведений о военных приготовлениях Азербайджана, готовящегося вооруженной силой, при участии регулярных войск Азербайджанского правительства и местного мусульманского населения, насильственно занять Зангезурский уезд, переданный решением Высшего Британского командования в Управление Зангезурского Национального Совета.

По частным известиям, полученным сего числа правительством Армении, азербайджанскими войсками, при участии курдских банд и местного мусульманского населения, наступление на Зангезур уже начато по южной долине Аракса в направлении Карабаба—Агарак—Егварт и со стороны Нахичевани в район Мегри.

Указанные действия, угрожающие развернуться в грандиозное кровопролитие, не могут быть оставлены правительством Армении без внимания.

Последнее обстоятельство заставляет меня, от имени моего правительства, просить Вас в срочном порядке телеграфно запросить Ваше правительство о том, соответствуют ли приведенные выше сведения действительности и если да, то какие меры предприняты Вашим правительством для немедленного предотвращения столкновения, долженствующего в противном случае привести к всеобщему пожару на широком пространстве Закавказья.

Правительство Армении, рассматривая последствия продвижения азербайджанских войск в сторону Зангезура именно в этой плоскости, просит Вас, ввиду крайней важности момента, считать свой запрос спешным и не терпящим отлагательства.

Прошу также не отказать срочно поставить меня в известность об ответе Вашего правительства.

Министр иностранных дел *А. Хатисов*

ЦГИА АрмССР, ф. 276, оп. 1, д. 42, л. 258—259. Машинопись. Копия.

№ 16

Ответ дипломатического представителя Азербайджанской республики на ноту министра иностранных дел Республики Армении о недопустимом вмешательстве во внутренние дела Азербайджанской республики

2 октября 1919 г.
№ 912 Эривань

В ответ на Вашу ноту от 28 сентября 1919 г. за 93/с. ой которая полностью была передана по телеграфу в Баку, мною получена вчера от министра иностранных дел Азербайджанской республики телеграмма следующего содержания:

Доведите до сведения министра иностранных дел Республики Армении, что Зангезурский уезд находится на территории Азербайджан-

ской республики, а потому запрос его, изложенный в упомянутой ноте, является недопустимым вмешательством во внутренние дела Азербайджанской республики, правительство коей не считается обязанным перед правительством Армении ответом о необходимых мероприятиях по внутреннему управлению отдельными областями республики.

О вышеизложенном имею честь довести до сведения Вашего высокопревосходительства.

Прошу принять уверение в совершенном моем к Вам почтении и уважении.

Дипломатический представитель Азербайджанской республики при правительстве Республики Армении
Ахвердов

ЦГИА АрмССР, ф. 276, оп. 1, д. 42, л. 260. Машинопись. Копия.

№ 17

Անգլիական գեներալ Շատելվորտի և Ղափանի ազգային խորհրդի նախագահ Սմբատ Մելիք-Ստեփանյանի միջև կայացած բանակցությունից

[Մայիս] 1919 թ.

Գեներալ Շատելվորտը ժամանեց Գորիս 25 հնդիկ զինվորներով, 11 ավտոմոբիլներով, մեկ զրահապատ մեքենայով։ Նրան ուղեկցում էր Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ իշխան Արղության Երկայնաբազուկը։

Գորիս քաղաք մտնելուց նրան ընդունեց Զանգեզուր—Ղարաբաղի պետական կոմիսարից ուղարկված հատուկ վաշտը։

Գեներալը իջևանեց անգլիական միսիայի բնակարանում և ցանկություն հայտնեց մեկուկես ժամ հետո իր մոտ տեսնելու շրջանային խորհուրդը։

Խորհուրդն իսկույն նախնական խորհրդակցության հրավիրվեց պետական կոմիսարի մոտ։ Այդտեղ պարզվեց, որ Տեղ գյուղում գեներալին կանգնեցրել էր մեր պահակը սպայի գլխավորությամբ և ամբողջ շարանը կանգնած կլիներ մի անախորժության առջև, եթե, մի կողմից, չլիներ [Հայաստանի] Հանրապետության ներկայացուցչի միջամտությունը և, մյուս կողմից, շրջանային կոմիսարը ձիավորներով իսկույն չհասներ պատվավոր ընդունելություն ցույց տալու։ Այս դեպքի մասին իրազեկ պահվելուց հետո մտքի թեթև փոխանակություն կատարվեց։ Իշխանը իրազեկ դարձրեց քաղաքական դրության մասին և ցանկություն հայտնեց, որ [գեներալի մոտ] պարտություն առաջ չբերելու համար անհրաժեշտ է քոչի և Ադրբեջանի հարցը զատել, նամանավանդ, որ [Հայաստանի] Հանրապետությունն արդեն ընդունել է քոչին տեղ տալու իր սահմանները։ Քոչը տնտեսական մեծ նշանակություն ունի [քոչվորների] փրկության համար և անգլիական ընդհանուր հրամանատարությունը, որպես Ադրբեջանի խնամակալ, ամենայն միջոց պիտի գործադրե անցկացնելու այդ հարցը։ Իսկ [մուսավաթական] Ադրբեջանի ոտնձգության մասին [Ազգային խորհուրդը], որքան կարող է, ուժեղ [կերպով] բողոքարկելու է։

Քանի որ խորհուրդն ի նկատի չէր առած այն հանգամանքը, որ քոչը միշտ կապված էր Ադրբեջանի [կողմից] մեր երկրին տիրանալու [մտադրության] հետ, [ուստի] մտքի փոխանակությունից հետո [խորհուրդը] եկավ այն եզրակացության, որ կարելի է հմտորեն անցկացնել այդ հարցը, որոշ գոտիներ առաջարկելով թրքության ներկայացուցիչներին։ Խորհրդի ներկայացուցիչների ընդհանուր համաձայնությամբ պետական կոմիսարը Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ իշխան Արղության Երկայնաբազուկի և խորհրդի նախագահության՝ Սմբատ-բեկ Մելիք-Ստեփանյանի,

Շիրինյանի, Բակունցի և քարտուղար Ծսայանի հետ գնում է [անգլիական] միսիայի մոտ։

Գեներալ Շատելվորտին ներկայանալուց հետո գեներալը սկսում է երկար ճառ, որը մաս-մաս թարգմանվում էր պատվիրակներին։ [Ահա այդ ճառը]. —Այն օրից, երբ Անգլիան մասնակցեց մեծ պատերազմին[13], իր՝ գեներալի համար, պարզորոշ էր, որ բացի մեծ խնդիրներից, նա [Անգլիան] պետք է դրականորեն լուծեր փոքր ազգությունների պահանջները, ցավերը և պատշաճ կացություն ստեղծեր նրանց համար։ Ի թիվս այդ ազգությունների, առաջնակարգ տեղերից է բռնում հայերի հարցը, հայերի, որ միշտ բարյացակամ են եղել Անգլիային և դեռևս պատերազմից առաջ շարունակ հոգս էին պատճառում նրան։

Անգլիան գիտե իր անելիքը և կատարածը հայության նկատմամբ։ Կովկաս մտնելով, Անգլիան, ինչպես և դաշնակից մյուս տերությունները, աշխատում են, որքան կարելի է, շուտ ստեղծեն խաղաղություն, կարգ ու կանոն բոլոր ժողովուրդների համար։ Ստեղծված իրադրության պայմաններում դաշնակիցները հանդիսացան [Անդրկովկասի] երեք պետությունների հովանավորն ու պաշտպանը։

Զանգեզուր—Ղարաբաղի տարածքում դեռևս չեն հաստատվել ընդհանուր կարգ ու կանոն, որի պատճառով էլ չեն ամրապնդվել պետական մեխանիզմի որոշ անհրաժեշտ մասերը, մասնավորապես հայկական մասում։ Դրանից էլ ստեղծվել է այն անտագոնիզմը, որի վերացման համար որքան էլ աշխատելիս լինեն դաշնակիցները, այնուամենայնիվ, երկիրը դեռևս չի ընդունել հանգիստ կյանք, հանգիստ կառավարություն։

Պարզ ու հասկանալի է ձեր ցանկությունը՝ չճանաչել Ադրբեջանը։ Սակայն պարզ պետք է լինի նաև ձեզ, որ ձեր լեռներում երկար ապրել չեք կարող, [որովհետև] կտրված եք ամեն կողմից, փակ են բոլոր ճանապարհները, ներքևից՝ Արաքսի ափից, Օրդուբադի և Նախիջևանի կողմից։ Ունեք միայն մի ճանապարհ, այն է՝ Եվլախի, որն անշեղ կապված է Ադրբեջանի պետության հետ, որը [գերիշխանությունը] ընդունելուց, հասկանալի է, բաց կլինի, չընդունելուց՝ փակ, ուրեմն և փակ բոլոր գյուղերից։ Այդպես ապրել չի կարելի, երկար չի քաշիլ, որքան էլ քարշ տալու լինեք։ Միևնույն է, վերջ ի վերջո պիտի հասկանաք երկրի դրությունն ու հրամայական պահանջը։

Այսօր ձեզ մոտ է իջևանել անգլիական գլխավոր հրամանատարության գեներալը՝ ձեզ հասկացնելու դրությունը, պարզելու անմիտ լինելն ամեն մի հակառակության։ Սակայն դուք փորձ եք անում նույնիսկ անգլիական զորքի առջևը կտրելու, անգլիական գեներալի ճանապարհը փակելու, որի մասին առայժմ չեմ խոսում, հետո կվերադառնանք այդ հարցին։ Այսօր-վաղը թուրքերի քոչը պիտի գա, ինչպես միշտ, իր տեղերը։ Այդ հարցը ահագին տնտեսական նշանակություն ունի, անպատճառ պիտի գա և [թե] ինչու, դուք պիտի հասկանաք։ Դուք պետք է ընդդե՞մ կանգնեք Ադրբեջանի քոչին, որին ուղեկցելու են հնդիկ-անգլիական զորքերը։ Ո՞վ պետք է պատասխան տա ձեզնից։ Ունե՞ք, արդյոք, պատասխան։ Այսօր ինձ կանգնեցրին Տեղ գյուղի մեջ Հայաստանի Հանրապետության անունից։ Դուք գիտե՞ք, արդյոք, դա ինչ է նշանակում։ Դուք գիտե՞ք, թե որքան բարեկամական են մեր և Հայաստանի Հանրապետության հարաբերությունները։ Հայաստանը, որպես պետություն, ձեր պաշտպանությունն, արդյոք, իր վրա վերցնո՞ւմ է։ Դուք գիտե՞ք այդ։ Ո՛չ, երևի դուք դա չգիտեք։ Բայց դրան կվերադառնանք։ Ուրեմն, Տեղում կտրում եք քոչի առջևը և նման քայլեր է՞ք թույլ տալիս։ Բայց գուք պիտի իմանա՞ք, որ ադրբեջանական կարգերին հակառակվելով, դուք հակառակվում եք Անգլիային։ Դուք ունե՞ք պատասխան։ Ի՞նչ է ձեր պատասխանը։

Սմբատ Մելիք-Ստեփանյան։— Գեներա՛լ, դուք շատ խոսեցիք, շատ հարցեր շոշափեցիք, կաշխատենք, որքան կարող ենք, բավարարել ձեր հարցերը։ Դեռևս պատերազմի ժամանակից մեր այս փոքրիկ Զանգեզուրը ամեն միջոց գործ դնելով՝ ընդդեմ կանգնեց, թույլ չտվեց օտոմաններին ոտք դրնելու այստեղ և, այնուհետև, հետ էր մղում ադրբեջանական բոլոր ոտնձգու-

թյունները։ Եվ մեր երկրի վճիռն է, գեներալ, ոչ մի միջոցի առջև չկանգնել, թույլ չտալ Ադրբեջանին ոտք գնելու մեր երկիրը մինչև [Փարիզի] վեհաժողովի որոշումը։ Եվ այդ բանում մենք հույս ունենք մեզ կօգնեն մեր դաշնակից մեծն Անգլիան։ Ադրբեջանի վարչակազմի մեջ մտնելը փակում է մեր երկրի բոլոր ճանապարհները՝ քոչի հարցում որևէ բանակցություն վարելու համար։ Եթե [այդ բանը] ինքը՝ Ադրբեջանն է առաջարկում մեզ, [ապա] ամեն ուժով ընդդիմանում է մեր ժողովուրդը և՛ Ադրբեջանի, և՛ քոչի, և՛ ամեն ինչի [հարցում]։ Քոչ բան է և հարցը բոլորովին կփոխվի, եթե երաշխավորեն մեզ աղատ լինելու Ադրբեջանի ամեն մի ոտնձգությունից։ Այն ժամանակ մենք համաձայնություն կտանք [բանակցելու] թուրքերի ներկայացուցիչների հետ՝ որոշ ճանապարհներով նրանց տեղեր հատկացնելու համար, նույնիսկ երաշխավորելով հանգիստ կացություն։

Գեներալ—Այնուամենայնիվ, ադրբեջանական կարգերը պետք է մտնեն այստեղ։ Կառավարության մեջ կլինեն հայեր, նահանգապետի գլխավոր օգնականը [կլինի] հայ, այլ կերպ լինել չի կարող, վճիռն անխախտելի է։ Դուք մտածո՞ւմ եք ազգությունների մասին, դուք մտածո՞ւմ եք, որ [առանց Ադրբեջանի] կառավարչական ոչ մի ֆունկցիա չի կարող լրջորեն հիմք ստանալ Զանգեզուրում։ Այս հանգամանքներում այդպես ապրել չի կարելի, ոչ մի ներմուծում չեք ունենա, ամեն տեղից կտրված կլինեք։

Ս. Մելիք-Ստեփանյան—Դեռևս ցարական տիրապետության ժամանակներից Զանգեզուրը երբեք տեսած չէ այսպիսի խաղաղ կյանք, կացություն, կարգ, ինչ տիրում է մեր երկրում այժմ։ Այդ մտքով ոչ մի կարիք չի զգացվում մեր երկրում։ Մեկընդմիշտ, գեներալ, [թող] պարզ լինի ձեզ, որ Զանգեզուրը, ինչ գնով էլ որ լինի, չի ընդունելու Ադրբեջանի վարչակազմը...[14]

ԽՄԿԿ Կենտկոմին առընթեր Մի հայկական մասնաճյուղի կուսարխիվ, ֆ. 1022, ց. 3, գ. 91, թթ. 33—34 հակ.։ Ձեռագիր։ Անստորագիր։

№ 18

Телеграмма Министерства иностранных дел Республики Армении дипломатической миссии в Грузии о наступлении мусаватистских войск на Зангезур, и о мероприятиях мирного разрешения спорных территориальных вопросов с помощью держав-победительниц

№ 4787

12 ноября 1919 г.,
Эривань

По инициативе Армянского правительства на 20 ноября назначена армяно-азербайджанская конференция, в задачи которой [входит] разрешение мирным путем соглашений по спорным территориальным вопросам. Наши делегаты были готовы к выезду на конференцию. Между тем сегодня получены срочные официальные данные об общем наступлении азербайджанских войск на Зангезур. В районе Хознавар-Баяндур идут седьмой день сильные кровопролитные бои. Одновременно ведется наступление со стороны Нахичевани. Таковые действия совершенно противоречат заявлениям Азербайджанского правительства, желанию мирного соглашения или арбитража и делают предполагаемую конференцию излишней, также противоречат постановлениям Мирной конференции недопустимости насильственных захватов спорных территорий, противоречат соглашению полковника Гаскелля с Азербайджаном и порядку установленному в Зангезуре высшим Британским командованием. Армянское правительство просит Вас употребить всю силу влияния держав-победительниц указанием Азербайджанскому правительству недопустимость таких действий и предложить прекратить бое-

вые операции, дав возможность путем конференции прийти к мирному соглашению. Всю ответственность за дальнейшее правительство Армении возлагает на Азербайджан, желающий силою оружия захватить Армянский Зангезур. Прошу срочного ответа для выяснения нашего образа действий.

Министр—председатель—министр иностранных дел *Хатисов*

ЦГИА АрмССР, ф. 276, оп. 1, д. 131, л. 26. Заверенная копия.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Ակնարկում է 1918 թ. հունիսի 4-ին Բաթումում Օսմանյան կառավարության և Հայաստանի հանրապետության միջև կնքված ստորագրիչ պայմանագիրը, որով Հայաստանի հանրապետության սահմանները պարփակվում էին Երևանի և Նրան կից մի քանի շրջաններով։

2 Նկատի ունի Լեռնային և Դաշտային Ղարաբաղի հայությանը։

3 Թուրքմենչայի պայմանագրից (1828 թ.) հետո Զանգեզուրը մտավ Ղարաբաղի պրովինցիայի, ապա՝ Ելիզավետպոլի (Գանձակ, այժմ՝ Կիրովաբաղ) նահանգի մեջ։ Հասկանալի է, որ վարչատարածքային այս բաժանումները բխում էին ցարական կառավարության ներքին գաղութային քաղաքականության առանձնահատկություններից։

4 1918 թ. հունիսի 17-ին Գանձակում ստեղծված մուսավաթական կառավարությունն իր վրա է վերցրել թուրքական օկուպացիոն զորքերի բոլոր ծախսերը, Գանձակի նահանգը հայտարարել ռազմական գրության մեջ, կազմակերպել զորահավաք՝ նպատակ ունենալով թուրք նվաճողների հետ տիրելու Ղարաբաղին ու Զանգեզուրին։

5 Սմբատ Մելիք-Ստեփանյանը լեռնային ինժեներ էր։ 1918—1920 թթ. իբրև Ղափանի Ազգային խորհրդի նախագահ ակտիվորեն մասնակցել է Զանգեզուրի ինքնապաշտպանության կազմակերպմանը (Բանբեր Հայաստանի արխիվների, 1989, № 1)։

6 Ղարաղշլաղ (հնում՝ Բերդաձոր) գյուղը գտնվում էր Շուշուց Գորիս տանող ճանապարհի վրա։ Գյուղի համայնքի մեջ մտնում էին 6—7 հայկական գյուղեր ևս։

7 1918 թ. օգոստոսի 3-ից մինչև 1919 թ. ապրիլի 1-ը իր հարվածող զորամասով գտնվելով Գորիսում և Սիսիանում, զորավար Անդրանիկը սերտ կապերի մեջ է եղել Ղարաբաղի հայոց ազգային խորհրդի, Զանգեզուրի կենտրոնական ազգային խորհրդի և մյուս գավառների նմանատիպ խորհուրդների ու հայրենասիրական լայն խավերի հետ և հմտորեն կազմակերպել երկրամասի ինքնապաշտպանությունը թուրքական զորքերի հարձակումներից։

8 Ի խախտումն 1918 թ. հոկտեմբերի 30-ին կնքված Մուդրոսի դինադադարի, ըստ որի Թուրքիան պետք է իր զորքերը դուրս բերեր Անդրկովկասից և զորացրեր բանակը, թուրքական բազմաթիվ սպաներ (Նրանց թվում՝ Նուրի փաշան, Խալիլ փաշան, Քյազիմ բեյը և այլն, որոնց հանդիպում ենք փաստաթղթերում) մնացին Ադրբեջանում, խնդիր ունենալով կազմակերպելու և գլխավորելու մուսավաթական բանակը։ Նրանցից, օրինակ, Քյազիմ բեյը, որն աշքի էր ընկել Բաքվի ու Շուշու գրավման ժամանակ հայ խաղաղ բնակչության նկատմամբ գործադրած վայրագություններով, Զանգեզուրի վրա արշավելիս իրեն փաշա անվանեց՝ տպավորություն ստեղծելու համար։ Սակայն այդ տիտղոսը չօգնեց Նրան և Նրա կանոնավոր բանակը չարաչար պարտություն կրեց Եղվարդ-Ագարակի ճակատամարտում։

9 Աշոտ Մելիք-Մուսյանցը հետագայում եղել է Ղափան-Գենվազ-Գողթանի գավառական կոմիսարը։ Լինելով Ղափանի օկրուգային համագումարի նախագահ, Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո հանդիպումներ է ունեցել Թիֆլիսում ՌԽՖՍՀ-ի լիազոր ներկայացուցիչ Բ. Լեգրանի հետ և իր պատրաստակամությունը հայտնել համոզելու Գ. Նժդեհին՝ խաղաղ ճանապարհով գավառը միացնելու խորհրդային Հայաստանին։ Բ. Լեգրանի մանդատով վերադառնալով Զանգեզուր, նա այդ մասին հայտնում է Նժդեհին։ Սակայն վերջինս չի համաձայնում և Ա. Մելիք-Մուսյանցը, հուսահատված այդ անհաջողությունից, ինքնասպան է լինում։

10 Ինչպես հայտնի է, գերմանա-թուրքական կողմի պարտությունից հետո Անդրկովկասն ընկավ անգլիական տիրապետության տակ։ Հանուն Բաքվի նավթի անգլիացիներն ամեն կերպ օժանդակում էին մուսավաթականներին՝ տիրելու Ղարաբաղին ու Զանգեզուրին։

11 «Արև» դրական, հասարակական ու քաղաքական օրաթերթը լույս է տեսել Բաքվում՝ 1914—1919 թթ.։

12 Սուլթանով խոսրով բեկը մուսավաթական կառավարության 1919 թ. հունվարի 15-ի որոշումով նշանակվել էր Շուշու, Զանգեզուրի, Ջեբրայիլի և Ջևանշիրի գավառների նահանգապետ։ Ղարաբաղի հայության շարդերի ոգեշնչողն ու կազմակերպիչն էր։ Ադրբեջանում խորհրդային կարգերի հաղթանակից հետո իրեն հռչակեց Ղարաբաղի հեղկոմի նախագահ, սակայն որոշ ժամանակ անց ձերբակալվեց և ուղարկվեց Բաքու։ Հետագայում անցավ Իրան և գործեց խորհրդային իշխանության դեմ։

13 Նկատի ունի առաջին համաշխարհային պատերազմը։

14 Այստեղ ձեռագիրն ընդհատվում է։ Այս խոսակցության շարունակությունը պահվում է նույն արխիվի մեկ ուրիշ ֆոնդում, որը մեքենագիր օրինակի չհաստատված պատճենն է։ Ինչպես երևում է փաստաթղթից, անգլիական գեներալի հետ կայացած բանակցությանը մասնակցել են նաև խորհրդի հրավիրված մյուս անդամները, որոնց կողմից էլ Շատելվորտի առաջարկությունը մերժվել է։ Տեղի սղության պատճառով բավարարվեցինք սոսկ փաստաթղթի առաջին մասի հրապարակումով։